COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԸ ԽԹԱՆՈՒՄ Է ԱՌԵՎՏՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *Covid-19 համավարակ, հովանավորչություն, արտահանման արգելք, տնտեսական անվտանգություն, ԵԱՏՄ*

Շուշան ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2016 թ. աշխատանքի է անցել ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ սկզբում որպես կրտսեր հետազոտող, իսկ 2018 թ.-ից առայսօր՝ որպես փորձագետ: Հեղինակ և համահեղինակ է 9 գիտական աշխատանքների:

Համաշխարհային առևտրի ազատականացումն անժխտելի օգուտներ է պարունակում դրան մասնակից բոլոր կողմերի համար: Փորձը, սակայն, ցույց է տալիս, որ ճգնաժամային իրավիճակներում մեծանում են հովանավորչական առևտրային քաղաքականության իրականացման ճնշումները, քանի որ կառավարությունները փորձում են օժանդակել նախընտրելի ճյուղերին, պահպանել զբաղվածությունը և նվազեցնել տնտեսական վնասները:

Ներկայում, COVID-19 համավարակով պայմանավորված, աշխարհի շատ երկրներ սկսել են կիրառել առևտրի կարգավորման միջոցառումներ, որոնք միտված են ծայրահեղ կարևոր ապրանքների պակասուրդի կանխմանը: Երկրների մեծ մասն այդպիսի քայլեր կատարում է ինքնուրույնաբար՝ առանց տարածաշրջանային, միջազգային մակարդակներում առևտրային քաղաքականության համակարգման:

Հոդվածում ներկայացվում են COVID-19 համավարակով պայմանավորված արտաքին առևտրի սահմանափակումներն աշխարհի երկրներում, դրանց նպատակներն ու հնարավոր հետևանքները:

Կորոնավիրուսով վարակվածների թիվն արդեն հատել է 5 միլիոնի սահմանը, զոհերի քանակն անցել 344 հազարից: Համավարակը խաթարել է տնտեսական բնականոն գործունեությունն ամբողջ աշխարհում: Աննախադեպ միջոցառումները, որ կիրառում են երկրները մարդկային կյանքեր փրկելու համար, ահռելի վնասներ են հասցնում համաշխարհային տնտեսությանը:

Covid-19 մեծ հարված է հասցնում նաև համաշխարհային առևտրին: Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) զեկույցի համաձայն՝ գլոբալ առևտուրն արդեն իսկ նվազել էր 2019 թ.՝ ԱՄՆ-Չինաստան տնտեսական պատերազմի հետևանքով: 2020 թ. կանխատեսվում է միջազգային առևտրի կտրուկ անկում ինչպես բոլոր տարածաշրջաններում, այնպես էլ տնտեսության բոլոր հատվածներում: Ըստ լավատեսական սցենարի՝ 2020 թ. ապրանքների համաշխարհային առևտուրը կնվազի 13%-ով: Իսկ եթե կառավարությունները ձախողվեն իրավիճակի վերահսկման և միջոցառումների համակարգման գործընթացներում, ապա անկումը կկազմի 32% և ավելի: Կանխատեսումների այսպիսի մեծ միջակայքը պայմանավորված է նույնքան մեծ անորոշությամբ, քանի որ բուն խնդիրը դուրս է տնտեսական համակարգից: Անորոշությունից են բխում նաև արտաքին առևտրի ոլորտում իրականացվող հովանավորչական միջոցառումները:

Ապրանքների, ծառայությունների, կապիտալի, աշխատուժի, տեխնոլոգիաների շուկաների միջազգային փոխկապվածության օգուտներն անժխտելի են: Սկսած 1817 թ.՝ Դ. Ռիկարդոյի համեմատական առավելությունների տեսության ներկայացումից ի վեր, բազմաթիվ վերլուծություններով հաստատվել է ազատ առևտրի դրական նշանակությունը դրան մասնակից բոլոր կողմերի համար: Արդյունքում համաշխարհային տնտեսությունում առևտրի ազատականացումը շարունակական բնույթ է կրում: Էմպիրիկ տվյալները, սակայն, ցույց են տալիս, որ ճգնաժամային իրավիճակները հանգեցնում են հովանավորչական միջոցառումների աճի՝ դրդելով կառավարություններին նախաձեռնելու առևտրի սահմանափակման և այլ պատասխան քայլեր[1]:

Ի՞նչ է իրենից ներկայացնում հովանավորչությունը

Առևտրի հովանավորչությունը քաղաքականություն է, որ պաշտպանում է ազգային տնտեսությունն օտարերկրյա մրցակցությունից արտաքին առևտրի պետական կարգավորման գործիքների կիրառմամբ:

Covid-19-ով պայմանավորված՝ 2020 թ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Բժշկական պարագաների և դեղամիջոցների արտահանման սահմանափակումները[2]

Աղբյուրը՝ Global Trade Alert:

[1] Farhad M., The global economic crisis, contemporary protectionism, and least developed countries, 2013, p. 40, https://www.unescap.org/sites/default/files/8-IIIT~1.pdf

[2] 2020 թ. սկզբից սկսած՝ 82 երկիր և ինտեգրացիոն միավորումներ ներկայացրել են, ընդհանուր առմամբ, արտահանման սահմանափակման 132 միջոցառում (2020 թ. մայիսի 1-ի դրությամբ):



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Գյուղատնտեսական և պարենային ապրանքների արտահանման սահմանափակումները[3]

Աղբյուրը՝ Global Trade Alert:

փետրվար, մարտ, ապրիլ ամիսների ընթացքում ավելացել է արտահանման սահմանափակումների թիվը:

Համավարակները փոխել են պատմության ընթացքը: Բացի ահռելի մարդկային կորուստներից, դրանք տնտեսական վնասներ են հասցրել, իսկ երբեմն, որքան էլ տարօրինակ է հնչում, հանգեցրել բնակչության եկամուտների և բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

Հովանավորչական միջոցառումներ են իրականացվում բժշկական պարագաների, դեղորայքի և ծայրահեղ կարևոր պարենային ապրանքների առևտրի ոլորտում՝ նպատակ հետապնդելով կանխելու այդպիսի ապրանքների պակասուրդը երկրներում: Ըստ շվեյցարական Global Trade Alert[4]-ի տվյալների՝ 2020 թ. սկզբից 82 երկիր և ինտեգրացիոն միավորումներ բժշկական պարագաների և դեղամիջոցների արտահանման սահմանափակման 132 միջոցառում են ներկայացրել (մայիսի 1-ի դրությամբ): Ընդ որում, միջոցառումների 36%-ը (թվով՝ 47-ը) բաժին է ընկնում զարգացած երկրներին և վերջիններիս ինտեգրացիոն միավորումներին (Եվրոպական միություն): 22 երկիր և ինտեգրացիոն միավորումներ, ընդհանուր առմամբ, ներկայացրել են գյուղատնտեսական և պարենային ապրանքների արտահանման սահմանափակման 31 միջոցառում: Զարգացած երկրները պարենային ապրանքների արտահանման սահմանափակման միջոցառումներ չեն ներկայացրել:

Բժշկական պարագաների և դեղամիջոցների արտահանման սահմանափակումների կիրառումը սկսվել է դեռևս փետրվարին՝ ընդգրկելով բավական լայն աշխարհագրական շրջանակ՝ Եվրամիության երկրներ, ԵԱՏՄ, ԱՄՆ և այլն: Սակայն, ելնելով անհատական պաշտպանական միջոցների պակասուրդից, Եվրամիությունը մարտի վերջին թույլատրել էր նմանատիպ ապրանքների արտահանումը մեկ վերա-

[3] 2020 թ. սկզբից սկսած՝ 22 երկիր և ինտեգրացիոն միավորներ ներկայացրել են, ընդհանուր առմամբ, արտահանման սահմանափակման 31 միջոցառում (2020 թ. մայիսի 1-ի դրությամբ):

[4] Շվեյցարական Global Trade Alert-ը ուղեղային կենտրոնների և ինստիտուտների ցանց է, որն իրականացնում է համաշխարհային առևտրային քաղաքականության մշտադիտարկում իրական ժամանակում: Չնայած համաշխարհային ընդգրկմանը՝ այն իր ուշադրության կենտրոնում է պահում G-20 երկրների կառավարությունների քաղաքականությունը, քանի որ վերջիններիս ղեկավարները 2008 թ. ստանձնել են «հովանավորչություն չկիրառելու» պարտավորություն: Տես https://www.globaltradealert.org

պահումով. արտահանում իրականացնել ցանկացող ընկերությունները պետք է ստանային իրենց երկրների կառավարությունների համաձայնությունը: Այդուհանդերձ, ԵՄ-ն շատ արագ կերպով վերափոխել էր նաև այս որոշումը՝ գիտակցելով դրա ծանր հետևանքներն այն զարգացող երկրների համար, որոնք կախված են ԵՄ-ից բժշկական պարագաների ներմուծումից[5]:

Եվրասիական տնտեսական միությունն (ԵԱՏՄ) ապրիլի սկզբին ընդունել է համավարակի հակազդման և ԵԱՏՄ տնտեսական կայունության ապահովմանն ուղղված միջոցառումների փաթեթ՝ ըստ որի միասնական ժամանակավոր սահմանափակումներ են կիրառվում ծայրահեղ կարևոր ապրանքների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման նկատմամբ[6]: Մասնավորապես՝ մինչև 2020 թ. հունիսի 30-ը արգելվում է մի շարք պարենային ապրանքների արտահանումը: Ցանկում ներառված են սոխը, սխտորը, աշորան, բրինձը, հնդկացորենը, կորեկը, այլուրը, արևածաղկի սերմերը և այլն: Մինչ այդ՝ մարտի 24-ին, որոշում էր կայացվել ժամանակավորապես (մինչև 2020 թ. սեպտեմբերի 30-ը) արգելել ԵԱՏՄ տարածքից բժշկական պարագաների արտահանումը[7], այդ թվում՝ դիմակներ, ռեսպիրատորներ, պաշտպանիչ ակնոցներ, ախտահանող միջոցներ և այլն:

Հարկ է նշել նաև, որ այս միջոցառումներին զուգահեռ, մի շարք համանման արտադրանքների նկատմամբ կիրառվում են ներմուծման զրոյական մաքսատուրքեր: Դրանք են պարենային, գյուղատնտեսական և բժշկական ապրանքներն ու դեղամիջոցները, որոնք, ստեղծված իրավիճակի հետ կապված, կարող են կարճաժամկետ հեռանկարում ունենալ մեծ պահանջարկ կամ պակասուրդ:

Համավարակի սկզբնական շրջանում ինտեգրացիոն կառույցների ներսում բացակայում էր համակարգված քաղաքականությունը ոչ միայն առողջապահական ճգնաժամի հակազդման, այլև տնտեսական քաղաքականության իրականացման տեսանկյունից:

Մինչև միասնական միջոցառումների կիրառումը ԵԱՏՄ երկրներն արդեն իսկ ներկայացրել էին ծայրահեղ կարևոր ապրանքների առևտուրը կարգավորող միջոցառումների ցանկ: ՀՀ-ում պարետի մարտի 19-ի որոշմամբ սահմանափակվել էր մի շարք բժշկական պարագաների արտահանումը, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ[8]: Նման ապրանքների արտահանման համար անհրաժեշտ էր համապատասխան թույլտվություն ստանալ Պետական եկամուտների կոմիտեից: Այս որոշումն ուժը կորցրած է ճանաչվել ապրիլի 3-ին՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ համավարակի հակազդման միջոցառումների հաստատումից հետո:

ՌԴ կառավարությունը մարտի 17-ին հաստատել էր համավարակի պայմաններում կայուն տնտեսական զարգացման առաջնահերթ միջոցառումների ծրագիր, որը նախատեսում էր նաև պարենային և ոչ պարենային առաջին անհրաժեշտության ապրանքների արտահանման ժամանակավոր սահմանափակումների կիրառում[9]: Մարտի սկզբին Ռուսաստանը արտահանման արգելք էր սահմանել անհատական պաշտպանական, ինչպես նաև ախտահանող միջոցների նկատմամբ: Նշված արգելքը նախատեսվում էր կիրառել մինչև

[5] Linders Th., Verstappen R., An even Greater Trade Collapse? How COVID-19 is changing global supply chains, April 30, 2020, https://fleishmanhillard.eu/2020/04/greater-trade-collapse-how-covid-19-is-impacting-trade/

[6] Решение Коллегии ЕЭК от 31.03.2020 № 43 "О внесении изменений в Решение Коллегии Евразийской экономической комиссии от 21 апреля 2015 г. № 30 "О мерах нетарифного регулирования"", https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01425280/err_02042020_43

[7] Решение Коллегии ЕЭК от 24.03.2020 № 41 "О внесении изменений в Решение Коллегии Евразийской экономической комиссии от 21 апреля 2015 г. N 30 "О мерах нетарифного регулирования"", https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01425254/err_26032020_41

[8] Առանձին ապրանքների համար արտահանման ժամանակավոր սահմանափակումների մասին պարետի որոշում, 19 մարտի, 2020, N6, https://www.gov.am/files/docs/3957.pdf

[9] Мониторинг принятых государствами-членами ЕАЭС мер, направленных на преодоление негативных последствий распространения коронавирусной инфекции (COVID 2019), стр. 174, http://www.eurasiancommission.org/ru/covid-19/Documents/МОНИТОРИНГ%20на%208%2005.pdf

2020 թ. հունիսի 1-ը, որը, սակայն, ուժը կորցրած է ճանաչվել ապրիլի 30-ին[10]:

Ղազախստանի գյուղատնտեսության նախարարի հրամանով, 2020 թվականի մարտի 22-ից սկսած, երկիրը կիրառել է արգելք պարենային մի շարք ապրանքների արտահանման նկատմամբ: Ցանկում ներառվել են հնդկացորենը, ցորենի ալյուրը, կաղամբը, գազարը, ճակնդեղը, սոխը, շաքարը, արևածաղկի սերմերը և արևածաղկի ձեթը: Այս միջոցառումը նպատակ է հետապնդել արտակարգ դրության պայմաններում կանխելու ներքին շուկայում ծայրահեղ կարևոր ապրանքների պակասը: Ապրիլի սկզբին արտահանման արգելքը չեղարկվել է. ներկայում երկրում գործում են առաջնային պարենային ապրանքների արտահանման սահմանափակումներ (մինչև 2020 թ. սեպտեմբերի 1-ը): Մասնավորապես՝ ցորենի և այլուրի արտահանումն իրականացվում է գյուղատնտեսության նախարարության հաստատած ամսական մասնաբաժնի շրջանակներում:

Ղրղզստանի Հանրապետությունը դեռևս փետրվարի սկզբին ներկայացրել էր մի շարք պարենային (ցորեն, ալյուր, ձեթ, բրինձ, մակարոնային արտադրանք, շաքար, ձու, աղ և այլն) և ախտահանող ապրանքների արտահանման արգելքներ:

ԵԱՏՄ անդամ երկրներից Բելառուսն այն եզակիներից է, որ հրաժարվել է համավարակի դեմ պայքարի արտակարգ միջոցառումներից: Այնուամենայնիվ, անվտանգության նկատառումներից ելնելով, Բելառուսը մարտի ընթացքում ներկայացրել է երկրի սահմաններից բժշկական մի շարք պարագաների և պարենային ապրանքների արտահանման արգելք: Ծայրահեղ անհրաժեշտ ապրանքների պակասուրդը կանխելու նպատակով բելառուսական մեծաթիվ ձեռնարկություններ վերամասնագիտացել են անհատական պաշտպանության միջոցների և հակասեպտիկների արտադրության մեջ:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Եվրասիական տնտեսական միության երկրներն աստիճանաբար ավելի համակարգված արտաքին առևտրային քաղաքականություն են վարում:

Ներկայում իրականացվող առևտրի հովանավորչական միջոցառումները, միտված լինելով պետական անվտանգության ապահովմանը, նպատակ են հետապնդում կանխելու պարենային ծայրահեղ անհրաժեշտության ապրանքների ու բժշկական պարագաների պակասուրդը: Արտահանման սահմանափակումներին զուգահեռ, աշխարհի երկրները ժամանակավորապես ազատականացնում են նույն ապրանքների ներմուծումը (զրոյական մաքսատուրք, մաքսային ընթացակարգերի պարզեցում և այլն): Ավելին, ծայրահեղ կարևոր ապրանքների համար «պայքարը» սոսկ առևտրի կարգավորման միջոցառումներով չի սահմանափակվում: Փորձելով ձեռք բերել կենսական նշանակության բժշկական պարագաներ, սկսած դիմակներից մինչև թոքերի օդափոխման սարքեր, որոշ երկրներ և տարածաշրջաններ պնդում են, որ իրենց համար նախատեսված մատակարարումները խորհրդավոր կերպով ուղղորդվել են մեկ այլ տեղ՝ առավելապես Միացյալ Նահանգներ[11]: Սպիտակ տունը հերքում է դա: Իրականում, սա միակ օրինակը չէ:

Պարենային և բժշկական ապրանքների առևտրի արգելքի հետևանքով ծանր վիճակում կհայտնվեն այն երկրները, որոնք կախված են այդ ապրանքների միջազգային առևտրից: Հետագայում սահմանափակումները կարող են ընդլայնվել՝ ընդգրկելով կորոնավիրուսի դեմ արդյունավետ դեղորայքի առևտուրը, իսկ կարանտինի ավարտից հետո՝ նաև թեստավորման սարքավորումները:

Ասիական առևտրի կենտրոնի տնօրեն Դեբորահ Էլմսի կարծիքով, առաջիկայում երկրներն աստիճանաբար կսկսեն հովանավորչական քաղաքականություն վարել նաև այլ ոլորտներում՝ նպատակ ունենալով պաշտպանելու ազգային տնտեսությու-

[10] Постановление от 2 марта 2020 года №223, http://static.government.ru/media/files/odPVbEJwgG6QH0ryeIX-GwqAIBTnzjfMm.pdf

[11] Covid-19 is bringing out protectionist instincts. “Piracy” in obtaining vital supplies may rebound on those responsible, April 19 2020, https://www.ft.com/content/ed78b09c-80a3-11ea-8fdb-7ec06edeef84

նը: Կառավարությունները կօժանդակեն նախընտրելի արտադրություններին, ճյուղերին[12]: Ու թեև այսպիսի հովանավորչական միջոցառումները, որպես կանոն, կարճաժամկետ բնույթ են կրում, այդուհանդերձ պատմությունը ցույց է տալիս, որ դրանք ժամանակի ընթացում կայունություն դրսևորելու, ճգնաժամային իրավիճակի ավարտից հետո դեռ երկար ժամանակ պահպանվելու և համաշխարհային առևտրի զարգացմանը խոչընդոտելու վատ «սովորություն» ունեն:

[12] Yen Nee Lee, Coronavirus pandemic will cause a 'much bigger wave' of protectionism, says trade expert, April 9, 2020, https://www.cnbc.com/2020/04/10/coronavirus-expect-a-lot-more-protectionism-says-trade-expert.html

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առանձին ապրանքների համար արտահանման ժամանակավոր սահմանափակումների մասին պարետի որոշում, 19 մարտի, 2020, N6, https://www.gov.am/files/docs/3957.pdf
2. Мониторинг принятых государствами-членами ЕАЭС мер, направленных на преодоление негативных последствий распространения коронавирусной инфекции (COVID 2019), стр. 174, http://www.eurasiancommission.org/ru/covid-19/Documents/МОНИТОРИНГ%20на%208%2005.pdf
3. Постановление от 2 марта 2020 года №223, http://static.government.ru/media/files/odPVbEJwgG6QH0ryelXGwqAIBTnzjfMm.pdf
4. Решение Коллегии ЕЭК от 31.03.2020 № 43 "О внесении изменений в Решение Коллегии Евразийской экономической комиссии от 21 апреля 2015 г. № 30 "О мерах нетарифного регулирования"", https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01425280/err_02042020_43
5. Решение Коллегии ЕЭК от 24.03.2020 № 41 "О внесении изменений в Решение Коллегии Евразийской экономической комиссии от 21 апреля 2015 г. N 30 "О мерах нетарифного регулирования"", https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01425254/err_26032020_41
6. Covid-19 is bringing out protectionist instincts. "Piracy" in obtaining vital supplies may rebound on those responsible, April 19 2020, https://www.ft.com/content/ed78b09c-80a3-11ea-8fdb-7ec06edeef84
7. Farhad M., The global economic crisis, contemporary protectionism, and least developed countries, 2013, p. 40, https://www.unescap.org/sites/default/files/8-IIIT~1.pdf
8. Global Trade Alert, https://www.globaltradealert.org
9. Linders Th., Verstappen R., An even Greater Trade Collapse? How COVID-19 is changing global supply chains, April 30, 2020, https://fleishmanhillard.eu/2020/04/greater-trade-collapse-how-covid-19-is-impacting-trade/
10. Yen Nee Lee, Coronavirus pandemic will cause a "much bigger wave" of protectionism, says trade expert, April 9 2020, https://www.cnbc.com/2020/04/10/coronavirus-expect-a-lot-more-protectionism-says-trade-expert.html

Шушан МОВСИСЯН
Эксперт исследовательского центра "Амберд", АГЭУ

ТРАЕКТОРИЯ ПАНДЕМИИ

ПАНДЕМИЯ COVID-19 СТИМУЛИРУЕТ ПРОТЕКЦИОНИЗМ ТОРГОВЛИ

Либерализация мировой торговли имеет неопровержимые выгоды для всех сторон торговли. Однако опыт показывает, что в кризисных ситуациях усиливается давление на осуществление протекционистской торговой политики, поскольку правительства пытаются поддержать предпочтительные отрасли, сохранить занятость и уменьшить экономические убытки.

В настоящее время, в связи с пандемией COVID-19, многие страны мира начали применять меры регулирования торговли, которые направлены на недопущение дефицита критически важных товаров. Большинство стран проводят такие мероприятия самостоятельно, без координации товарной политики на региональном, международном уровнях.

Статья рассматривает ограничения внешней торговли в странах мира в связи с пандемией COVID-19, их цели и возможные последствия.

Ключевые слова: *пандемия Covid-19, протекционизм, запрет на экспорт, экономическая безопасность, ЕАЭС*

Shushan MOVSISYAN
Expert at "Amberd" Research Center, ASUE

PANDEMIC TRAJECTORY

COVID-19 PANDEMIC PROMOTES TRADE PROTECTIONISM

Liberalization of global trade has undeniable positive outcomes for all parties, engaged in international trade. However, empirical evidences show that crises put countries under pressure of executing protectionist trading policy. Governments try to help favored sectors, keep employment and reduce economic damage.

Currently, in terms of coronavirus pandemic, many countries have introduced trade regulation measures aiming to avoid deficit of critical goods. Every country fights for itself, without coordinating measures at regional, international levels.

The paper studies trade restrictions in terms of coronavirus pandemic, aims of restrictions and their potential outcomes.

Keywords: *Covid-19 pandemic, protectionism, export curbs, economic security, EAEU*